

## •ՄՈՎՍԵՅ ԽՈՐԵՎԵՑԻԱՅ ՄԵԿ ՆՈՐ ԾՂՅԵՒԹԸ•

Պարիզում եղած ժամանակս բախտ ունեցայ ծանօթանալու հայագէտ Պ. պրօֆեսօր կարիերի հետ Պարիզի ազգային մատենադարանում երբ նա իր ամարային ճանապարհորդութիւնից վերադարձած մատենադարան էր եկել և Մովսէս Խորենացու պատմութեանը համար նոր գտած յունարէն աղքիւրը համեմատում էր: Նա այն ժամանակ դեռ չգիտէր, որ Սեղբեստրոսի վարքը, այն է՝ Մովսէս Խորենացու նոր աղքիւրը, կայ նաև հայերէն թարգմանուած և որ այդ թարգմանութիւնը իբրև աղքիւր Մովսէս Խորենացու յայտնի է եղել նաև «Հայկազնեան լեզուի բառգիրքը»<sup>4</sup> կազմող Միհթարեաններին: Այս տեղեկութիւնը նա յետոյ ստացաւ Նորացը Բիւզանդից և վերջը յարմար առթով Վենետիկ գնալով, տեսաւ նաև անձամբ հայերէն բնադրերը, Նրա այդ հին գիւտի նորոգման արգիւնք եղան երկու հետաքրքիր նամակներ, որ նա ուղղել է Վիեննայի Միհթարեանց և որ բնագրաւ հանդերձ լոյս տեսան «Հանգէս—Ամորեայ»ի 1892 թ. 8 և 12-ում: Նա իր առաջին նամակի մէջ<sup>2</sup> ասումէ: «Կարծեմ թէ նորագէտ է<sup>5</sup> այն համեմատութիւնը, զոր

4 (Ծան. տես յիշեալ բառգրքի նախագրութեան էջ 19 Ա.արք Սեղբ. «Պատմութիւն սրբոյն Սեղբեստրոսի Հռովմայ հայրապետի. բայ հետո ինչ նույն է բայս կողէն այս այլ պատմութիւններու մէջ»: «Այդ իմացել են նաև Վիստոն եղբայրները և նշանակել են իրենց լատիներէն թարգմանութեանը մէջ, էջ 210 ԳԼ. 2. ծանօթութիւնում նկատելով «նոյն առասպելը պատմումէ նաև Սեղբեստրոսի վարքի մէջ, և ըստ երևոյթին նոյն աղքիւրից են քաղել»: Acta Silvestri.... eandem fabulam narvant ac proinde ex eodem fonte videntur hausta.)

5 Ծան. տես լ. օ. էջ 250:

3 Ծան. Մենք տեսանք առաջ էլ իմացողներ եղել են,

ասոր կից էջերու մէջ ըրած իւր Մովսէս Խորենացու մէկ հատուածին և վարուց Սեղբեստրոսի (vita Silvestri) մէկ հատակոտորին մէջ: «Նոր համեմատած աղքիւրը յարգելի Պրօֆեսօրին այնքան ծանրակշիռ է թուացել, որ նա չի վարանուել գրելու. «Նոյն իսկ հերուն, երբ կըգրէի իւր», «Մովսէս Խորենացի և ծընընդաբանութիւնը նահապետաց» գործքը, դեռ այն կարծիքն ունէի, թէ կարելի է սոյն գրոց ծագումը գնել 460 և 480 տարուայ մէջ, որ այսօր ինձ բոլորովին անհնարին կերեւար:»

Նամակագիրը մի քանի ընդհանուր գիտումներ անելով Մ. Խորենացու պատմութեան աղքիւրների մասին նկատումէ, որ նա սովորաբար ընդունածից աւելի յաճախ է գործ դրել իրեւ աղքիւր սրբերի վարքեր։ Վկայաբանութիւններ և այդ հանգամանքով պիտի բացատրել նրա բազմաթիւ սխալները Հռովմայեցւոց պատմութեան մէջ: 4 Մովսէս Խորենացու այդ գլուխ մէջ պատմուած է Կոստանդիանոսի հալածանքը ընդգէմ քրիստոնէից, իր կնոջ Մաքսիմինայի դրդմամբ, կայսեր հիւանդութիւնը և բժշկուիլը Սեղբեստրոսի ձեռքով (տես. Մ. Խոր. Գ. Բ. գլ. ԶԳ.):

Այդ նմանութիւնից յարգելի գիտնականը հետեւեալ եղբակացութեան է գտիս. «Այն որ Մ. Խորենացի փոխառութիւն մ' ըրած է Հուր (կամ վկայաբանութիւն) Սեղբեստրոսի գրութենէն՝ կարեւոր կէտ մըն է իւր պատմութեան յօրինման ժամանակը ճշտելու համար: Իմ մեծահռչակ պաշտօնակցիս Տիւշէնի (M. labbé Duchesne, le liber Pontificalis etc I. P. cix et cx) ըրած հմտական հետազոտութեանց համեմատ՝ վարք Սեղբեստրոսի գրութեան լատինական խմբագրութիւնը և դարու վերջին տարիներէն յառաջ չի կրնար ըլլալ. ուստի և յոյն թարգմանութիւնն ամենէն կանուխ Զ. դարու առաջին տարիներն եղած

4 Ծան. «Նոյն միտքը յայտնումեն գարձեալ Աեստոն եղբայրները վերսիշեալ ծանօթութեան մէջ իրանց զարմանքն յայտնելով, ինչպէս կարող էր Եւսեբիոսի պատմութիւնը կարգացած մի անձն նման ողորմելի սիաւաց մէջ ընկնել. Caeterum totum fere hoc caput erroribus et fabulis tam ſeode coopertum est ut nostram plane admirationem moveat, quomodois tam misere in his rebus labi potuerit, qui Eusebium videtur legisse.

պիտի ըլլայ: Այն առեն պէտքէ թողուլ Խորենացւոյ Հայոց Պատմութեան յօրինման նկատմամբ աւանդեալ տարեթիւր, և նոյն գրոց յօրինումն մինչեւ Զ. դար իջեցնել: Չենք կրնար ըսել թէ այս կտորը յետամուտ յաւելուած մըն է, այնու որ Խորենացւոյ գրութեան կերպն ու ոճը կը մատնէ մեծապէս:

Պրօֆ. կարիէրի այս առարկութիւններին պատասխանեց Սուքիս վարդապետ Պարոնեանը «Հանդ. Ամ.» 1892 թ. 11<sup>4)</sup>: Պատասխանի մէջ Հ. Պարոնեանը խոստովանումէ նոր գտած աղբիւրի հետաքրքրական լինելը, «եթէ կարող լինէաք իւր գիւտոյն հետ նաև յառաջ բերած հետեւութեան հնազանդեցուցանել ոչ թէ զմեր միտո, այլ զմեր արդէն ի ձեռին ունեցած անյեղի և անընդդիմադրելի ծանօթութիւնները առանց անխուսափելի անտեղութեան մէջ գլորելու»: Խոկ մեր ձեռին ունեցած անժիտելի փաստը հաստատումէ, որ Մոլ. Խորենացին եղել է ո. Սահակի և Մեսրովպի աշակերտ, ապրել է և զրել հինգերորդ դարում, ուստի չէր կարող օգտուել հինգերորդ դարու վերջերում գրած լատիներէն լեզուով Մեղքեստրոսի վարքի վեցերորդ դարում թարգմանած յունարէն բնագրից: Այլ նա աւելի հաւանական է համարում բնդունել, որ թէ Խորենացին և թէ Լատիներէն վարքի հեղինակը օգտուել են ընհանուր աղբիւրից: Պ. կարիէրը Հանդ. Ամ. թ. 12 էջ 273 նոր փաստեր ձեռք բերած հանդէս է դուրս գալիս Պարոնեանին պատասխանելու: Նա մի կողմն է թողնում նրանից արծարծած ժամանակագրական ինդրի լուծումը՝ «մանաւանդ որ մեր այս նկատմամբ ունեցած տեղեկութիւնք բոլորովին ճշգրիտ չեն և մեծաւ մասամբ թովմայի Արծրունւոյ (Ժ. դար) և Սամուելի Անեցւոյ (ԺԲ. դար) պէս նոր հեղինակներէ բղխած է»: Նա իր ձեռին ունենալով Պ. Նորայր Բիւզանդի հաղորդած տեղեկութիւնը, յարմար առթիւ Վենետիկ եղած ժամանակում համեմատումէ Ս. Ղազարի վանքում պահուած չորս հայերէն ձեռագիր (թ. 693, 738, 767 և 781)

4) Ծանօթ. Մոլսիսի Խորենացւոյ նոր աղբեր գիւտն ի Պրօֆ. Ա. Կարիէրէ. Բանագատառութիւն էջ 343):

պատմութիւն Առկրատայ-ի սկզբում գտնուած Վարք Աեղքեստրոսի գրուածքը Մովսէս Խորենացու վերոյիշեալ հատուածի հետ Անկողմնապահ ընթերցողը կընկատի, որ համեմատութեան համար իրար մօտ գրած կտօրները այնքան իրար նման են, որ երկուսի իրարից կախում ունենալը ընդունել անկարելի է, ուստի արդարացի է պ. քննադատի կարծիքը, երբ նա վկայում է. «Հոս ի մէջ բերուած կաորը լիուլի կըբաւէ արդարացնելու սա առաջին եղբակացութիւնը՝ թէ Մովսէս Խորենացի գործածած է վարուց Աեղբեստրոսի հայերէն թարգմանութիւնը:»

Պարիզում տեղի ունեցած մասնաւոր խօսակցութեան շնորհիւ պ. Կարիերի հետ սկսեցի աւելի հետաքրքրուել Առկրատի պատմութիւնով և մտադրուեցի Էջմիածին գալով աչքի անցնել Ա. Աթոռի մատենադարանի նոյն պատմութեան հայերէն ձեռագրերը որոնք յիշատակել էր Պ. Ա. Մալիսասեանը իր հրատարակած «Ասողիկ»ի ծանօթութեան մէջ և Հ. Գ. Զարբանալեանը իր թարգմանական մատենագրութեան պատմութեան մէջ<sup>1</sup>:

Ասողիկի պատմութեան մէջ Առկրատի պատմութեան թարգմանութեան մասին հետեւեալ տեղեկութիւնը կայ. «Ի սորա աւուրս (Անաստաս Կաթողիկոսի) էր Փիլոն Տիրակացի, որ զԱռկրատայ պատմութիւնն թարգմանեաց ի հայ լեզու»<sup>2</sup>:

Հ. Զարբանալեանը Առկրատի պատմութեան հայերէն թարգմանութեան մասին ասումէ. «Աւելի հետաքննականն մեր մատենագրութեան համար այն է՝ որ Առկրատեան գրոցս իրարմէտարբեր երկու հայ թարգմանութեան հանդիպած ենք, երկուքն ալ բաւական ընտիր լեզուով և գեղով, այլ մին համառօտագոյն քան զմիւսն: Այս երկրորդ՝ կամ ինչուան հիմա ծանօթ եղածներէն որիշ թարգմանութիւնն կը պահուի, ինչպէս լսեր ենք, յերուսաղէմեան ազգային մատենադարանի:»

1 (Ծան. Տատենադարան Հայկական թարգմանութեանց նախնեաց Ա. Ե. Նետ. 1889. էջ 693 և լու.):

2 (Ծան. Տես Ստեփաննոսի Տարօնեցոյ Ասողիկան պատմութիւն տիեզերական ի Ս. Պետերբուրդ 1885 էջ. 99 և ծանօթութիւն 7, էջ 292):

Հետեւալում նա առաջ է բերում համեմատութեան համար երկու թարգմանութիւնիցն էլ կտորներ, որից ակնյայտի էրեւում է նոցա մեծ տարբերութիւնը: Դժբաղսաբար նա նեղութիւն չի քաշել պարզելու այն խնդիրը՝ թէ նոքա երբ են թարգմանուած, արդեօք միևնոյն ժամանակում, թէ ոչ և որ գլխաւորն է՝ ո՞րն է այդ թարգմանութիւններից Փիլոն Տիրակայունը: Եթէ պարզուած լինէր այդ հարցը, հեշտութեամբ կիմանայինք թէ երբ է մոել Մովսէս Խորենացու պատմութեան մէջ Աեղքեսարոսի պատմութեան կտորը, որով և Պ. Կարիերի Մովսէս Խորենացու պատմութեան գրութեան ժամանակի յարուցած խնդրի դէմ կարծիք յայտնելը փաստական հիմունքներ կունենար: Արդէն սկսել եմ մասնաւորապէս զբաղուել այդ հարցով և յոյս ունիմ կարողանամ ժամանակին երկու թարգմանութեանց մասին բաւական որոշ տեղեկութիւն տալ, այս անգամ կցանկայի պ. Կարիերի արծարծած խնդրի աւթիւ միայն մի երկու խօսք առել, բայց նախապէս հարկաւոր է իմանալ թէ մենք ինչ տեսակ թարգմանութիւններ և ինչ ձեռագրեր ունենք:

Մայր Աթոռի մատենագարանում կան վեց ձեռագիր Առկրատի պատմութեան: Երեք կարգի պէտքէ բաժանել այդ ձեռագրերը: «Արարատի» հետեւեալ համարում տւելի երկար կանգ կառնենք նոցանից իւրաքանչիւրի վրայ, իսկ այս անգամ կըբաւականանք լոկ յայտնելով, թէ նոքա ինչով են իրարից տարբերուում: Ձեռագրերից մէկը՝ թիւ 1682—ըստ նոր համարագրութեան և ցուցակի, որ կազմել է Սահակ Արեգայ Ամատունին—, ամենաընտիրն է և ամենահինը: Դժբաղգաբար պակաս են նրանից մի թերթ սկզբից և մէջն էլ տեղ թերթերի մասեր են պատռուած, տեղ տեղ տառեր աղջատուած և վերջապէս մի թերթ բոլորուին մաքուր է թողնուած: Մատեանի վերջի յիշատակարանը գրչագրողի կողմից նոր է և չի կարող մեղ ծառայել նրա իսկական ժամանակը որոշելու, միայն ենթագրութեամբ կարելի է նրան 12—13 րդ դարու ձեռագիր համարել: Հ. Զարբանալեանի նշանակած երկրորդ օրինակիցն է մեր այս ձեռագիրը և մենք համոզուած ենք, որ սա է իսկապէս Փիլոն Տիրակացու թարգմա-

նածը. մի թարգմանութիւն, որ լի է յունաբանութիւններով՝ շատ մօտ է յունական բնագրին և հակառակ չ. Զարբանալեանի վկայութեան շատ հեռու է «ընաիր լեզու» ունենալուց:

Երկրորդ կարգին պատկանումեն երեք ձեռագիր, մէկը բուլորգրով, երկուսը նօտրգրով: Այս կարգի տարբերութիւնը առաջինից շատ շատ է. սա բնագրի հետ համեմատած աւելի ազատ թարգմանութիւն է, այո մինչև անգամ կարելի է փոխադրութիւն քան բառացի թարգմանութիւն համարել. տեղ տեղ կրճատումներով, տեղ տեղ յաւելուածներով: Լեզուի ընորութեան կողմից առաջինից շատ բարձր է, իսկ երրորդ ամենաէական տարբերութիւնն է. առաջինի մէջ Սեղբեստրոսի վարքը կցած է Սոկրատի պատմութեան վերջում և մի յառաջաբանով բացատրուած, որ այդ երկու գործքերը իրար հետ ոչ մի առնջութիւն չունին և մինչև անգամ թարգմանիչներն էլ տարբեր են: Սաորե գնումեն այդ յիշառակարանը, որից իմանումենք Սեղբեստրոսի վարքը 19 դարից առաջ է թարգմանուած եղել քան Սոկրատի եկեղեցական պատմութիւնը մի ուն թարգման Աբաս Գրիգոր Չորուփորեցւոյ ձեռքով կամսարականի փեսայ Վրաց Ներսէս իշխանի ինդրանօք:

Յառաջ քան զութուտասն ամ ի թարգմանելոյ Փիլովնի զգիրսդղայդ Սոկրատայ զեկեղեցական պատմութիւն թարգմանեալ էր Աբասուն Գրիգորի Չորոյփորեցւոյ թարգմանի ընդ փառաւորս յիշելոյ. Ներսէհի Վրաց իշխանին փեսային կամսարականայ զգիրս պատմութեան վարուց սրբոյն Սեղբեստրոսի եպիսկոպոսին Հարումայ և կայր ի քարտիսի: Այժմ պատշաճ համարեցաք առ զտին գրոց զրել:

Երկրորդ կարգի ձեռադրերի մէջ Սեղբեստրոսի վարքը պատմութեան սկիզբն է զրած, որով կարելի էր կարծել որ նա նոյն հեղինակի և նոյն թարգմանչի գործն է: Պ. կարիերը համեմատութեան համար երկրորդ օրինակն է աչքի առաջ ունեցել. և իրաւամբ Մ. Խորենացու պատմութեան միջի հատուածն էլ այդ թարգմանութիւնից է առնուած և ոչ առա-

ջինից: Համեմատութեան համար արտագրում ենք Մ. Խորենացու գ. բ. գլ. ԶԳ-ը և երկու ձեռագրի նոյն գէպքի նկարագրութեանը պատկանող տեղերը:

Խոր. գ. բ. գլ. ԶԳ.

Քայց յետոյ հրապուրեալ ի կնոջէն իւրմէ Մաքսիմինայ, ի գստերէն Դիոկղետիանոսի, յարոյց հալածանս եկեղեցւոյ և զբաղումս վկայեալ ինքն եղեփանդական բորոտութեամբ ըստ բոլոր ընկալեալ մարմնոյն ապականեցաւ վասն յանդգնութեանն: Զոր ոչ կարացին բուժել արիողակեանն կախսրդքն և մարիսկեան բժիշկքն. յաղագս որոյ յղեաց առ Տրդատ՝ առաքել նմա դիւժո ի Պարսից և ի Հնդկաց, սակայն և այնք ոչ հասին ի նմա յօդուտ: Զոր և քուրմք ոմանք ի գիւաց խրատուէ հրամայեցին բազմութիւն տղայոց զինու լ յաւազանս և ջերմարեամբ լուանալ և ողջանալ. որոյ լուեալ զլալիւն մանկանցն հանդերձ մարցն կականմամբք, գթացեալ մարդասիրեաց, զնոցայն լաւ վարկուցեալ քան զիւրն վրկութիւնն:

Զ Ե Ա. Ժ. 1 6 8 2

Փակ կին նորա վրդովեաց զնա հակառակ քրիստոնէից, և ի ժամանակին յայնմ արտագրեաց դաւանութիւն. հրամայեաց բոլոր քրիստոնէից զոհել հարկաւորապէս կոռոցն..... իսկ Կոստանդինոս թագաւոր զՄաքսեմինայ Դիոկղետիանոսի դուստր ունելով կին, զբաղումս ի քրիստոնէից ոստակէ ինքն ապա եղափանտական բորոտութիւն ըստ բոլորն ընկալեալ մարմնոյ վիրաւորեցաւ. ուստի մնութի ասացեալ արիողկեանն կախսրդք. և մարսիկեանն բժիշկք. և ոչ միայն նոքա այլ և որք ի Պարսից աճեալք և փորձք բժշկական գոլով արհեստից ոչ կարացին աւգնել նմա:

Եւ երեւեցան ապա ոմանք առ ի քրմանց տաճարին ասելով, պարտէ աւազան լինել ի տաճարին և լնուլ զնա արեամբ անապական մանկանց. յորում ջերմ գոլով. և ծխելով լուանալ զնա. և այնպէս կարել մաքրութեան հանդիպել:

Եւ ահա առաքեալ զոմանս ընդ բոլոր գաւառս բազմութիւն մանկանց ածին: Եւ ի ոսահմանեալ աւուր երթեալք ի թագաւորէն ի տաճարն էին պատրաստեալք որք կամէին զմանկտին զենուլ: Պատահեցան և մարք մանկանցն սգով մեծաւ գոչելով ար-

ասսուաւք հերարձակ գլխով. և լցեալ կականագոչ ողբովք որպէս զի զամենայն զաւքս ողբերկական ձայնիւ լնուր. իբր զի ոչ փոքր ահ և երկիւղ առնել թագաւորին և Սիւնկլիդոսին բոլորցն պազատանն։ Հարցանելով ապա թագաւորին թէ զինչ այն իցէ . . .

Թ. 1670.

«Բայց հրապուրեալ ի կնոջէն իւրոյ՝ Մաքսինուեա ի դըստերէն Դիոկղիտեանոսի և արար հալածանս եկեղեցւոյ. Կոստանդիանոս ի ձեռն կնոջ իւրոյ պատրեալ և բազումք եղեն վկայք և խոստովանողք արհամարելով զչար տանջանս և զմահս որ ըստ հրամանի թագաւորին և կնոջն խոշտանգէին դատաւորք և զինւորք . . . Յայնժամ եղէփանդական բորոտութիւն զբոլոր մարմին թագաւորին կոստիանոսի ապականէր որպէս ի խրատնմա առ ի յԱստուծոյ լեալ։ Վասնորոյ արիոկեան կախարդք և արիստոկեան բժիշկք ոչ կարացին օգնել. աւն անդք և ոչ Պարսից և Հայոց։ Եւ նա արակուսեալ տրամէր։ Ըղձանային քուրմք ի գիւաց հրապուրանաց յոլովից տղայոց զենուլ յաւազանս մեշենից և լուանալ ջերմ արեամք զանձն. և այնպէս առողջանալ ասէին։

Եւ անդէն վաղվաղակի առաքեցան զինուորք թագաւորին ընդաշխարհն ամենայն ժողովել մանկունս անմեզս անջատեալս ի ծընողացն ի տաճար մեշենիցն առ ի զենուլ յաւազանսն։ Եւ մարքն զինի մանկանցն եկեալ լային և աշխարէին զմահ մանկանցն։ Եւ լուեալ թագաւորին զձայն կոծոյ և աշխատանաց, առէ ցմերձակացսն, զի՞նչ է այս զոր լսեման։

Նոյն իսկ առաջ բերած այդ փոքր հատուածից ընթերցողը կը նկատի մեր վերը տսածների ճշմարտութիւնը, այն է՝ ընդարձակ թարգմանութեան լեզուն միւսի համառօտինի համեմատութեամք շատ ստոր է, Խորենացին օգտուել է երկրորդ թարգմանութիւնից. բացի այդ հաւանական ենք համարում ընդունել, որ ընդարձակն է Փիլոնի թարգմանածը, թէև խոստովանումենք, որ առ այժմ ուրիշ կուռան չունինք մեր կարծիքի համար քան նախընթացում զրած նոյն իսկ ձեռագրի յիշատակարանը։  
Ո՞վ է երկրորդի թարգմանողը։ Այդ կարգի բոլոր ձեռագրերը

ունին միանման յիշատակարան և նրանցում յիշուած է «Ներսէջ կամսարական» ապիհիւպատ Պատրիկ, եկեղեցեաց շինող, ցանկացող «թարգմանութեան պատմութեան» բայց թէ ո՞վ է այդ կամսարականը, արդեօք առաջի ձեռագրի մէջ յիշածը, բայց նա վրաց իշխանէ և կամսարականի փեսայ է, թէ ուրիշ ո՞մնէ. առ այժմ վերջնական պատասխան տալ անկարող ենք:

Մի քանի խօսք էլ երրորդ կարգ ձեռագրերի մասին: Ոոքա ծագած են ուղղակի երկրորդից, միայն այն տարբերութիւնն ունին, որ մինչգեռ նոքա բաժանումներ չունին, սոքա մանր գլուխների են բաժանած և ունին վերնագրեր: Յիշատակարանները միևնուն են, ինչպէս նաև սոցա մէջ էլ Սեղբեստրոսի վարքը նախընթաց է Ոոկրատի պատմութեան:

Համառօտապէս խօսելով Ոոկրատի հայերէն ձեռագրերի մասին է կապելով այդ պ. կարիէրի յարուցած հարցի հետ՝ մեր նպատակն է ցոյց տալ, որ խիստ շտապած կը լինենք, եթէ այն հանգամանքից թէ Խորենացու պատմութեան մէջ վերցրած է Սեղբեստրոսի վարքի հայերէն թարգմանութիւնից, որ կարող է կատարուած լինել վեցերորդ դարում կամ աւելի ուշ եղբափակել, որ Խորենացին ոչ հինգերորդ այլ հետեւեալ դարերի պատմագիր է: Մենք զժբախտաբար մեր ձեռնին չունենք Դիւշէնի հայրապետաց գիրքը (Duchesne le liber pontificalis ete. I. p. c IX et c X) համոզելու համար, թէ ինչ հիմունքներ ունի նա կարծելու, որ Սեղբեստրոսի վարքի լատիններէն բնագիրը ծագել է հինգերորդ դարու վերջերում, որից յունարէնը թարգմանուած է և ապա հայերէնը, այլ միայն այսքանը կարող ենք հաստատել, որ Սեղբեստրոսի պատմութեան համառօտ թարգմանութեան մէջ այնպիսի ընտիր լեզու է գործ ածուած, որ սովորական է հինգերորդ դարում: բայց ոչ հետեւեալներում:

Փ. ՏԵՐ-ՄՈՎԱԿԱՆԵԱՆ

Վաղարշապատ 1893 թ.

Յունուարի 4-ին:

Մեր յօդուածը պատրաստ էր տպագրութեան երբ ստացանք «Մուրճ» ամսագրի անցեալ տարուայ վերջի համարը: Նրա հետա-

քըրքրական յօդուածների մէջ ամենից շատ գլաւեց մեր ուշագրութիւնը պ. Ստեփան Մալխասեանի յօդուածը նուիրուած պ. Կարիէրի արծարծած ինդրին՝ «Մոլուէս Խորենացու նոր աղբիւրը» Պ. Մալխասեան իւր յօդուածում արդարացի կերպով շեշտումէ թէ ինչպէս Մ. Խորենացու գր. Բ. գլ. ԶԳ-ի Զ. կամ Է. գարում ծագած լինելը ցոյց տալով պ. Կարիէրը մեզ ստիպումէ ընդունել, «կամ» որ Խորենացին հինգերորդ դարի մատենագիր չէ, այլ վեցերորդ դարի երկրորդ կէսում, մինչև իսկ եօթներորդ դարի վերջերում ապրող մարդ՝ կամ, եթէ Մ. Խորենացի անունով մէկն յիրաւի ապրել է հինգերորդ դարում, ուրեմն Խորենացու պատմութիւն կոչուած գիրքը նորա գրածը չէ, այլ մի կեղծիք է Զ. կամ Է. գարերի։ Մեր գարեւոր հաւատը դէպի Մ. Խորենացին, դէպի նրա մեծ պատմական գործը խիստ քննիչի մի հարուածով կարող է ոչնչանալ։ Պ. Մալխասեանը պաշտպան է գուրս գալիս Խորենացու հեղինակութեանը և ուրախութեամբ վկայում ենք մեր կողմից, նրա պաշտպանողական փաստերը այնքան զօրեղ, այնքան համոզիչ են, որ շատ հեշտութեամբ իւրաքանչիւր ոք կը համոզուի նրա պաշտպանութեան հիմնաւորութեան մէջ։ Առաջին անգամ կարգալով պ. Կարիէրի յօդուածը հարցրի նրանից, արդեօք չի կարող այդ կառկածաւոր գլուխը յետամուտ յաւելուած (Interpolation) լինել, բայց նա մերժեց առարկելով այդ գլուխը այնքան սերտ կապուած է թէ նախընթաց և թէ յետագայ գլուխների հետ, իր լեզուով ոճով այնքան համանման միւս մասերին, որ գժուար է պատմութեան թելը չնույնական համարեան նաև գալուստ Սարկաւակ Տէր-Մկրտչեանը որը քանի տարի է արդէն շարունակ ուսումնասիրումէ Խորենացուն։ Բայց այժմ պ. Մալխասեանը համարեա հաստատ ընդունելի է կացուցել յիշեալ գլխի յաւելուած լինելը, այն էլ ժՈ. գարում։ Հիմունքները հետեւեալներն են։

Ա. Խորենացին տեղեկութիւն չէ տալիս Հայոց քրիստոնէութիւն ընդունելու մասին, չէ պատմում Հոխիսիմեանց Հայաստան գալը և Ա. Գրիգոր Լուսաւորչի գործերը։ Նու օգտուումէ Ազա-

թանգեղոսից, դիտմամբ չէր կարող բաց թողնել այդ գեպերը, այլ կորել է սկզբնական բնագրից:

Բ. Պակասը՝ Բ. 82 և 84 գլուխների մէջ է. 82-ում՝ պատմած է Տրդատի Հայաստան դարձը, 84-ում՝ նրա գնալը Հռովմ, պակաս է քրիստոնէութեան մուտքի պատմութիւնը:

Գ. Որ 83 գլխի մէջ կորած համարուած պատմութիւնն է եղել ապացոյց է Ասողիկի պատմութիւնը: Ասողիկը հետեւել է Խորենացու պատմութեան վերցրել է նրանից համառօտելով երրեմն բառացի: Ասողիկի պատ. էջ. 60—62-ի Խորենացուց քաղելով պատմած է Ա. Տրդատի դարձը Հայաստան և նրա պատերազմները Պարսից դէմ. Բ. Ա. Հայուանաց նահապահուելը և ա. Գլէժունէ աղապահուելը, Գ. Տրդատի Հռովմ գնալը և Ալկունեաց նահապետի ապստամբութիւնը: Առաջին և երրորդ մասերը Խորենացու 82 և 84 գլ. են վերցրած: «Իսկ ո՞րտեղից է քաղել Ասողիկ միջին կտորը: Դժուար չէ մակարերել որ այս միջին կտորը Ասողիկ քաղել է Խորենացու պատմութեան Բ. 83 գլխից, որ այժմ կորած է, որ սակայն պէտք է գոյութիւն ունենար հին ժամանակ»: Պակաս կտորը կայ նաև Յովհան կաթուղիկոսի պատմութեան մէջ, որը ինչպէս յայտնի է Ասողիկից պակաս չափով չէ օգտուել Ա. Խորենացուց:

Դ. Հայոց դարձի պատմութիւնը և կոստանդիանոսեան առասպելը իրար հետ չէր կարող խառնել Խորենացու պէս մի անձն:

Ե. Բայց չէին կարող երկուսն էլ իրար մօտ դրուած լինել որ առուէր թէ մէկը մնացել է միւսը կորել:

Զ. Եթէ այդ այդպէս լինէր Ասողիկի և Յովհան կաթուղիկոսի պատմութեանց մէջ յիշատակութիւն կըդանէինք այժմ մեղ մընացած գլխի մասին:

Է. Խորենացին ինքն իրան հակասած կը լինի, եթէ գրած լինէր 83 գլ. պատմածները: Արովհետեւ կոստանդինը այստեղ դուրս է բերած իրքեւ մի պոռնիկի դաւակ, մինչդեռ նա Հոփիսիմեանց պատմութեան մէջ համարում է նրան Հոփիսիմէիթագաւորական ցեղից սերած:

Աւելի ծանրակշիռ է մեր կարծիքով այս գեպեռում՝

Վիստոն եղբայրների ասածը, ըստ որում անկարելի է հաւատալ, որ Եւսեբիոսի պատմութեանը քաջ ծանօթ մի անձն հաւատար և երկրորդէր կոստանդինի մասին պատմած առապելները<sup>1</sup>:

Ը, Բոլոր ձեռագրերի մէջ պատմութեան այդ գլուխը ոխալներից աւելի զերծ է:

Ութ փաստերն էլ այնքան հիմնական են թուայել պ. յօգուածագրին և են իսկապէս որ նա Բ. 83 գլուխը յաւելսած է համարում: Խոկ թէ ինչու է կոստանդինի պատմութիւնը ներս մուծուել կարծումէ, որ յաջորդ 84 գլխին «... ի գնայն Տրդատայ ի Հռոմ առ ոուրբն կոստանդիանոս» խոսքերն են պատճառել<sup>2</sup>:

Թէ ձեռագրերի մէջ աւելացրել են ժամանակի ընթացքում շարունակ նոր մասեր դրա համար նոյն խոկ մեր մատենագրութեան պատմութիւնից շատ օրինակներ ունենք: Մ. Խորենացու պատմութիւնը իբրև ամենահռչակաւորը աւելի շատ է ենթարկել անկոչ փոփոխիչների քմահաճոյքին. Եթէ նրա անուան կարող են կեղծ ճառեր և նամակներ վերագրուել ինչու ոլէտքէ նոյնպիսի ինքնակոչութիւն չսպասել և պատմութեան մէջ:

Ինչպէս պ. Մալխասեանը անկեղծ շնորհակալութիւն է յայտնում պ. Կարիերին նրա արծարծած խնդրի մասին, ևս առաւել ինքն է շնորհակալութեան արժանի այնպէս հիմնաւոր կերպով վերականգնելով մեր արդէն տատանուել սկսող հաւատը դէպի մեր պատմահայրը:

Փ. Տ. Ա.:

1 Ծան. Տես էջ 66 Ծան. 1.

2 Արգե՞ք ուրիշ գէպքերի նման այստեղ էլ խառը չէ արևմտեան եկեղեցու ջատագով անձանց խմբագրիչ գործունէութիւնը: